



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՎԱՀԱՆ ԹՈՒՅՎԵՆՑ

Ի Մ

ՀՈՐԱՔՈՒՅՐԸ

891.99

Թ. 11

Յ Ե Բ Ե Գ Ծ Կ

1925

891.59 23640-59  
            
p- 71

Հ. Դոյրմիկ  
իւ հարսանքի

ԿՍ	-5915	21/11/23	
ԿՍ-5	356	27/11/21	

391.59  
p-71 ԿԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

# ԻՄ ՀՈՐԱՔՈՒՅՐԸ



ՅԵՐԵՎԱՆ  
1925

22.04.2013

37543

# ԻՄ ՀՈՐԱՔՈՒՅՐԸ

1

Տասը տարուց ի վեր նրա ժառանգի վնչ մի տեղեկություն չունեմ: Ո՛ւր գնաց, ի՞նչ յեղավ իր կյանքի կմախքացած, բայց փոթորկոտ, նավը վճիռ ափին զարնվեց: Մինչև անգամ չեմ իմանում՝ վնջը ե թե մեռած:

Բայց հիշում եմ նրան իր վողջ կերպարանքով, իր բոլոր պառավությունները:

Մեր սերունդից տակավին շատ շատերը ճանաչում և հիշում են նրան—իմ հորաքերոջ, վոր ամեն տեղ եր—մեռելուանը, հարսաբերությանը, կովի և բամբասանքի մեջ, շուկայում, տանիքի վրա, աղբյուրը, պարտեզը, հիվանդի գլխուն վրա, աղացկան մոր վոտները տակը, ժառանգությունների բաժանման մեջ, դատարանի դռան, բաղնիսում, ժամի բակը, զբոսայրոցի հողաբարձունների մոտ, նշանաուրի և խոսք—կապի հաղար ու մի շղթաների մեջ: Նա մի կին եր, վոր յերբեք սիրած չեր:



23640-19

Գուար. № 866. Տիրաժ 400. Պատ. № 2315.

Տպագրական Տրեստի 2-րդ Տպարան, Յերևան:

Նրա արտահայտութիւնը նման էր այն եզրկատվին, վոր մայիսը առանց արու կատվի անցկացնելուց հետո՝ ման է գալիս տանիքներն ու տան անկյունները կծու նայվածքներով և ամեն մի փոփրիկ աղմուկից անգամ պատրաստ է ցցելու իր ստեփները:

Իմ հորաքույրը անց էր կացրել մոտ յոթանասուն մայիսներ արանց արուի և ման էր գալիս մեր տանը և մեր փողոցներում դառնացած և իր դառնութիւնների համար որերին, իրերին և մարդկանց զեմ չարացած:

Պարտված այս եզր թշնամի էր ամեն ընտանեկան խաղաղության, բոլոր բարի ժպիտների, բոլոր արևոտ արտահայտութիւնների:

Իր մարմնի բոլոր մասերը բուրում էլին կծվութիւն և բարկութիւն: Բարկացած էր բոլորի զեմ:

Նա յերբեք չէր սիրել:

## 2

Իմ հորաքույրը ձմեռները կաղ էր, վույ-վույով յերաժշտագին, իսկ ամառները՝ առողջ:

Նրա կաղութիւնը մեր աչքերին ձմեռը ավելի շեշտակի էր դառնում, վորովհետև ձմեռները տանն էլինք և դատապարտված լսել նրա վույվույներն ու վողբերը: Մենք այն տպավո-

րութիւնն ստացել էլինք, վոր նա միշտ էլ կաղ էր, վորովհետև քվ էր մտիկ տալիս ամառը տաններսում անցած դարձածներին: Բայց յես՝ տալիսներ հետո, նկատեցի նրա ամառնային կերպարանափոխութիւնը և մի որ էլ հարց տվի մայրիկիս:

— Ի՞նչպես է, մայրիկ, վոր հորքորիս վիտիորները ամառները կը շտկին և ձմեռները կը ծռին:

— Ձմեռը ջղեքը ցուրտեն կը քաշվին, պատասխանեց մայրիկս, իսկ ամառները կը թուլնան:

Այն ժամանակ հասկացա, վոր կաղութիւնը միայն վիտիորների հետ չէր, վոր կապ կարող էր ունենալ, այլ և ջղերի հետ:

Զիղը—անա իմ հորաքույրը ուրիշ կանանցից գանաղանելու գաղտնիքը: Զիղը միայն սրունքներին վրա չէր, վոր ազդում էր, այլ ջիղն էր, վոր կառավարում էր նրա մարդկային վողջ դէնացքը: Նրա մեջ ամենաակտիվը ջիղն էր:

Իմ հորաքույրը սև, չորացած մարմին ուներ, գլխի վրա կարճ և նոսրացած մազերով, աչքերը խավարակուռ գիշերվան նման խոր, մատները յերկար և ուռած յերակներով, ճակատը ծուռ ու մուռ, կուրծքը ներս անցած, փոր՝ յերբեք չուներ, կուրծքի անմիջապես տակից սկսում էլին իր բնութենափոխ սրունքները, վորոնք

այնքան ել յերկար վար չեյին վազում, այլ շուտով հասնում եյին գետին: Վոտները փոքրության և մեծության մասին յես վորոշ բան չեմ կարող հայանել, վորովհետև ամառ և ձմեռ քաշում եր մի (սրիլ<sup>\*</sup>) իր վոտներին մի քանի բրդե հաստ դուլպաներ հագնելուց հետո, կոնակը՝ Թեփերիզի գառիվերը ձեզ որինակ, վորի վերջացած կետից՝ ցցվում եր իր շուշուլիկ գլուխը առանց վզի, քթի վրայի մասը, ճակատի ստորոտը, աչքերի սրածայրությունից սեղմված, նման եր մահմետական անդեականի մաղե կամուրջին, քիթը՝ վերի կողմը բռնադատված լինելով նեղանալու՝ ինքնիրան թույլ եր սվել վարի կողմը ընդարձակվելու թե բարձրությամբ և թե լայնությամբ, վորի ծայրը, իբրև դագաթ, ամին ամիս ուռչում եր, կարմրում, հետո գեղնում և հուսկ ապա պայթում: Յես չեմ կարող նկարագրել նրա բերանը, վորովհետև մշտական ձև և բնավորություն չուներ: Յեթև տանն եր նա, ընտանիքի անդամների ներկայության, նրա բերանն առանձին ձև ուներ, յեթև հյուրեր գային՝ տարբեր ձև եր ստանում, հայրիկիս ներկայության՝ տարբեր, իսկ մայրիկիս հետ բամբասանք արած ժամանակ՝ բոլորովին այլ ձև եր ստանում, վայ թե քներ, այն ժամանակ բերանը իրը չեւ-

<sup>\*</sup> Խրիկ — կարկատաններով հաստացած մի կոշիկ:

մի անտեր և ավերակ խոտջ՝ ուր ամեն ինչ մտնում եր ու յեճում և այս ավերակ խոտջից դուրս եյին ցցվում իր մի կամ յերկու մնացած ատամները, ինչպես ցամաքը նետված հին և փչացած նավի կայմեր:

Իր հագուստը միշտ հին եր: Յերջանիկ եր ցնցոտիներում: Նա նախանձում եր մինչև անգամ բնության շուշուլիկի: Ատում եր լավ հագվողներին, ատում եր գեղեցիկներին:

Հիմա յերբ հիշում եմ նրան, մեր բարեկեցիկ տան Թափորություններին մեջ, ցցվում են իմ աչքի առաջ՝ նրա կարկատանները, նրա խունացած վերարկուն, նրա հագար ու մի գույներով կպցրած շապիկը, մանավանդ նրա գլխի շալը, վոր մի հիմար անգլիացի վորձեց դնել իբրև անտիկ ձեռագործ:

## 3

Հորաքույրս թեև չեր սիրել, բայց մի պահ ամուսնացած եր յեղել: Այդ անցյալ իրողության հետ մենք չեյինք կարող հաշտվել՝ յեթև այդ կյանքի թանձրացյալ հետքը — իր վորդին — չլիներ այս աշխարհի վրա: Բացի դրանից — մայրիկս ել վկայում եր: Ի՜նչպես կարելի եր մորս վկայությունը կասկածի տակ դնել:

— Այ ոձ կին քեզի, ատում եր հայրիկս

շատ անգամ իր քրոջ, գլխավորը հողին տակ գը-  
րիբ և վրան նստար:

Այս խոսքը իմ մեջ գարթեցրել եր խոր  
հետաքրքրութուն հասկանալու համար թե՛ ինչ-  
պես մի կին կարող եր իր ամուսնուն դնել հո-  
ղի տակը և վրան ել նստել: Մի որ հարց ավի  
մայրիկիս.

— Մայրիկ, հայրիկը կ'ըսե, վոր հորաքույրը  
իր մարդուն դրեր ե հողին տակ և նստեր ե վը-  
րան, այդ ինչպես կըլլա, ըսե ինձի:

— Հայրիկդ, վոր բարկանա, ըսածը չըսածը  
չի գիտեր, տղաս, պատասխանեց բարի մայրիկիս:

Բայց մի ուրիշ որ յես ստիպեցի մայրիկիս  
պատմելու, թե ինչպես հորաքույրը իր մարդին  
գրավ հողի տակ և նստեց վրան:

— Մինչև չպատմես, չեմ քնանար, ասացի  
մայրիկիս վճռական կերպով:

Յեվ մայրիկս պատմեց.

— Յերբ վոր յես ձեր տունը հարս յեկա,  
հորաքույրդ նոր եր ամուսնացեր: Գլխավորը  
շատ աղեկ մարդ եր, սուս ու փուս, խեղճին  
դուխը միշտ ուսին վրա, ամեն ատեն մեր  
տունը կուզար ու կըսեր. — «վայ այս կնիկը,  
վախ այս կնիկը իմ գլուխս պիտի ուտե»: Որ  
մըն ալ յեկան թե՛ Հաջին հիվանդ ե (Հաջին  
հորաքրոջս ամուսինն եր): Վագեցի, գացի, ինչ  
տեսնամ, կըսկներուն մեջ կը վառի, «հորքոր».

ինչ ե յեղեր, գուտորի յետեվեն մարդ գրկե»,  
ըսի:

«Ինչ գուտոր, ինչ բան, թող սատկի»,  
ըսավ և... մի քանի որ հետո խեղճ Հաջին մե-  
ռավ: Սաչերը (հորաքրոջս վորդին) հորը մա-  
հից հետո ծնվեց:

Մայրիկս այս խոքրիկ պատմութունը պատ-  
մեց և լռեց: Յես սկսա վախենալ:

— Մայրիկ, ասացի, ալ չեմ թողուր, վոր  
հորքորը գա գիշերը և ծոցս պառկի, ամեն  
գիշեր կուզա, մսեր եմ, կը'սե ու ծոցս կ'ըս-  
նա, վոր տաքցնեմ, ալ չեմ թողուր:

— Քեզի բան չըներ, տղաս, մի վախենար,  
պատասխանեց մայրիկս:

Հետո յերբ խեղճս գլուխս յեկավ և սկսեցի  
մարդն ու կինը իրարից զանազանել՝ այն ժա-  
մանակ հասկացա՝ թե ինչպես մի կին կարող ե  
իր մարդին հողին տակ դնել և նստել վրան:

Հորաքույրս ինքը շատ քիչ եր պատմում իր  
գլխավորի մասին, բայց մեծ գոհունակութամբ  
պատմում եր, լավ եմ հիշում, իր գլխավորի մահից  
հետո իրան կնության ուզողների մասին:

Մինչև հիմա ել պայծառորեն հիշում եմ  
Նազար եֆենդին, այն մարդը, վոր հորաքրոջս  
առաջարկել եր և նա մերժել եր ամուսնանալ:

Ամեն անգամ, վոր Նազար եֆենդին մեր  
դուան առջեվից եր անցնում, հորաքույրս խոր  
հառաջ եր արձակում և ասում.

— Ի՞նչ դժբոն էյի այն ժամանակ, վոր աս մարդը չառի, փոխանակ յեղբորս տունը մնալու, Նազար եֆենդիի տունը խանութ խաթուն կըլլէյի:

Այս ասելուց հետո՝ հորաքույրս խորունկ «անխ» եր քաշում և յերկու կեղծ և պատրաստի արցունքի կաթիլներ վազում էյին իր սև և ծալքոտած յերեսների վրա:

Շատ լավ եմ հիշում Նազար եֆենդին: Ամառ և ձմեռ, կախ ընկած վարտիքի նման մի անձրեանոց եր կրում, չոր, ցից ցից մագերով, յուղոտ ֆեսով: Նրա յերկու աչքերն իրարից տարբեր ուղղությամբ էյին հառում, կարծես նրանք տարբեր նպատակների էյին ձգտում կամ տարբեր տարբեր գանգեր էյին նրանց հրամայում: Նազար եֆենդու քայլվածքը նման եր այն իշու քայլվածքին, վորի ծանր բեռը, տիրոջը անհոգության պատճառով, քսվում, գալիս, հասնում է մինչև պոչին վրա, ծանրանալով միայն հետևի յերկու սրունքներին և խեղճ եշը ստիպված է գառիվեր բարձրանալ:

Բայց իմ հորաքույրս այդպե ս եր տեսնում Նազար եֆենդուն: Վո՛չ: Նրա աչքին Նազարը ուրիշ կերպ եր ներկայանում: Նա հաճախ ասում եր.

— Մա՛րդ, ի՞նչ մարդ . . . բոյը բոսը տե՛ղը, շարժվածքը, ոլբրտվածքը, լուրջ, քիչ խոսող, չխմող, կնկանը Ալմաս մը կըսես, Ալմաս

մըլ բերնեն կըյնի, տունը տեղը լեցուն, վաստակը տեղը, խանութ ու ժուշթարի սենի:

Նազար եֆենդու բոյը, ճիշտ է, այնքան եր յերկարած, վոր այլես պատճառաբանված չեր և դրա համար ել կոացել եր նա, ամաչելով, յերկի իր raison d'être-ի չդոյությունից, բայց խանութ և մուշղարի ունենալու հայտարարությունը շատ եր չափազանցված:

Նազար եֆենդին յերեսուն տարուց ի վեր՝ մեր քաղաքի մի խեղճ անկյունում ուներ մի փոքրիկ յեռանկյունի կրպակ, ուր առավտից մինչև իրիկուն գինվորների համար պատրաստի նամակներ եր գրում: Իր վողջ «գրասենյակի» կան կարասին—մի խարխուլ սեղան, մի աթոռ, վոր հազար ու մի չվաններով իր կայունությունն եր պահում, մի թանաքաման, թուրքերեն գրելու համար մի քանի յեղեգե գրիչներ, մի հողե ջրաման, մի բաժակ, վոր այլևս թափանցիկ չեր, այնքան եր փոշոտած, ապա մոռացս ասելու—մի ավել, վոր անգործածելի լինելուն համար դառել եր սարդի բույն:

Նազար եֆենդին—պետք է լինեմ արդար— ժառանգական և ամուսնալուծակտն գատերի համար ել աղերսագրեր եր գրում, վոր պարզապես արտագրում եր մի հին հաստափոր գրքից փոխելով անունները և թվականները և յերբեմն ել մի փոքրիկ հավելված եր հանդգնում նայած

նոր աղերսանքի էյուլթյան: Նազար եֆենդին ամեն մի աղերսագրի համար ստանում եր 60 փարա, իսկ պատրաստի նամակներին՝ 10 փարա: Այսպիսով եր Նազարը—եֆենդին— «տունը տեղը լեցուն» պահում:

Նազարը որեկան 50 տրեմ միս եր ուղարկում իր տունը և նոր միրգ գուրս գալուն պես՝ փաթթում եր իր նոր թաշկինակում և Ալմասին ու յերեխաներին համար, ժպտուն դեմքով, տանում եր տուն:

Հիշում եմ՝ գարունքից սկսած, ամեն 15 որը, Նազարը նստեցնում եր Ալմասին իշու վրա և տանում եր Ս. Նշան—ուխտի:

Այս ուխտը խոր նպատակներ ուներ—Ալմասը միշտ ունենում եր աղջիկ զավակ: Խեղճ ճնողներին աչքը ջուր դառավ և մի աղա զավակ գուրս չընկավ: Նազարը մտահոգվում եր, վոր, մի գուցե, մի վորդի չունենար իր յերջանիկ սերունդը շարունակելու... Նա հաճախ սսում եր իր կնոջը:

Վաղը մյուս որ փիջ մը գուրս կուզա՝ աղջիկներնուս մեկը կառնե կերթա, ուրիշ որ մը ուրիշ մը՝ յերկրորդս կառնե կը կորսվի, մենք կը մնանք մեր տան պատերու մեջը, հարս մը չենք ունենար, վոր մեզ խնամե:

Բայց Ս. Նշանը ինչ կապ ուներ առհասարակ կանանց սեռային ընդունակություններին

հետ, մանավանդ վոր Նազար եֆենդին յերբեք չեր թողնում իր կնոջը մենակ, վորպեսզի գեթ Ս. Նշանի սուրբերը մոտենային նրան:

Ահա Նազար եֆենդին:

Արդյոք Նազարը, մի որ, մտածել եր հորաքրոջս մասին— գա հարց ե, վորովհետև այդ մարդը, մեր պատուհանի առջևից անցնելիս՝ քիթը վեր չեր առնում և հորաքրոջս փնտրում:

Մի անգամ այդ մասին հարց տվի մայրիկիս: Նա ասաց.

— Լավ չեմ հիշեր, տղան, 30 տարի առաջ որ մը այդպես խոսք յեղավ, բայց խոսքն ըլ խոսք մնաց և վոչ վոք առաջարկություն չըրավ:

## 4

Հորաքույրս ընկույզից շինված մի խոշոր սնտուկ ուներ— յերեք հոգի կարող եր ծալապատիկ նստել մեջը— վորի բովանդակությունը միայն տան փոքրիկներն էյին իմանում, վորովհետև նրանց կարևորություն չեր տալիս և բաց անելիս՝ չեր հեռացնում նրանց իր մոտից:

Գովար թե յես հիմա կարողանամ վերհիշել այն բոլորը ինչ կար այդ հնամյա սնտուկում— 30 տարվա հին ստիլով կարված մետաքսե շորեր, կոշիկներ, զանազան գույնի կո-

ճի և խառնված թելեր, յերես սրբիչներ, ծածկոցներ, գուլպաներ, գլխանոցներ, վարտիկներ, շապիկներ, ասեղ, գնդասեղ, գանազան կերպասեղենի կտորներ, հին, ծուած վոսկիներ, մարգարիտներ, սեսակ տեսակ քարեղեններ, փոքրիկ մետաքսե խալիչաներ, արծաթ թաս, ծխամորճեր, համրիչներ, գոտիներ, ու տը կուլոնի շիշեր, պատկերների շրջանակներ, փխանկոյի թղթեր, հին թղթադրամներ, հին գրամներ, վոսկեկոթ գրիչներ, թանաքամաններ, հին ավետարաններ, Յերուսաղեմյան կարմիր խաչեր, կոճակներ, գտակներ, Փեսի ծոպեր, մատնոցներ, վերջապես գանազան իրեղեններ . . .

Գա հորաքրոջս համար սնտուկ եր, իսկ հորս համար—ցավ:

Մի որ լսեցի, վոր հայրիկս, խոր վշտով իր քրոջը ասում եր.

— Քուրս, հին բաները կը պահես՝ պահես, բայց գոնե նոր բերածներս հագիր, վորպեսզի գուրսերը վրաս չի ծիծաղին թե այս մարդը իր քույրը ցնցոտիներու մեջ կը պահես:

Հորաքույրս պատասխանեց գրան.

— Յես ջահել հարս չեմ, վոր հագվիմ՝ սըրվիմ և գուրս գամ, թո՛ղ կնիկդ հագվի:

— Գոնե գուրս վոր կերթաս—գուրս չերթաս բարով— ասաց հայրիկս, նոր շարձա-

Փրդ վրագ քաշե, բզիկ բզիկ յեղած շարձափովդ մի պտտիր:

Հորաքույրս դարձյալ մի անհարկի պատասխան տվեց և քրս քրս հեռացավ սենյակից բերանի և աչքերի դիվային ծամածուծյուններով:

Մի որ մեծ քույրս վերի սենյակից վար, հորս մոտ, յեկավ և ասաց.

— Հայրիկ, հորքորը մեր հյուրի ներկայության կըսես, վոր վոչինչ չունիմ հագնելիք:

— Ո՛վ ե հյուրը, հարց տվեց հայրիկս.

— Սարգիս Եֆենդին ե, պատասխանեց մեծ քույրս: Կ

Սարգիս Եֆենդին այնքան ել մեր տան մոտ մարդ չեր, վորպեսզի հորաքրոջս ստախտության տեղյակ լիներ, գրա համար ել՝ հայրիկս վրդովվեց: Նա գնաց ուղղակի հյուրանոց, բարեկց Սարգիս Եֆենդին և անմիջապես կանչել տվեց մեր յերկու ծառաներին և պատվիրեց հյուրանոց բերել հորաքրոջս բնկույզից շինված մեծ սնտուկը: Հորաքույրս այս պատվերի վրա սպրթնեց, սկսեց գողգոլալ, մի կերպ փորձեց ծառաներին արգելել, բայց հորս մի խոժոռ նայվածքը բավական եր, վոր նրան պատին գամեր, և . . . նա գամվեց: Կես ժամ քաշեց մինչև ծառաները, գրսից յերկու մշակների

ողնությամբ, սնտուկը հասցրին հյուրանոցը և դրին սենյակի ճիշտ մեջտեղը:

Մայրս պարտեզում զբաղված եր և վոչնչից վոչինչ չէր իմանում. բայց յերբ քույրերըս լուր տվին նրան, թե սնտուկը վեր կը տարվեր՝ յեկավ տեսնելու:

— Վարդեր, հրամայեց հայրիկս իմ հորաքրոջ, բաց սնտուկը:

Հորաքույրս դողդուլով և արցունքոտ աչքերով բացավ սնտուկը: Հայրս իր ձեռքովը ինչ վոր կար սնտուկում՝ դուրս թափեց և դառնալով Սարգիս եֆենդիին՝ ասաց.

— Ներեցեք, Սարգիս եֆենդի, այսքան բան ունի հագնելու, ասոր պես յոթն անգամ ալ ծախսեր ե և քիչ առաջ լսեցի, վոր ձեզի ըսեր ե թե վոչինչ չունի հագնելու:

— Թ՛ու յերեսիդ, ամոթ քեզ, անիծյալ կլին, ասաց հայրս և դուրս յեկավ հյուրասրահից:

Բոլորս ել իրար յերես նայեցինք և լռեցինք, բայց մայրիկս խզեց լուսթյունը.

— Գոհարի պես յեղբայր ունիս, ասաց, բավական ե վշտացնես, ջուրի պես վոսկի կը ծախսես, իսկ քեզ համար արժեք չունի, հետոզ գերեզման պիտի տանես, ինչո՞ւ չես հագնիր:

Հորաքույրս չսիրված եղի նման գայրացած՝ բազուկները բացավ, աչքերը չուց և անիծեց մեր տունը—բոլորիս:

Յերբ գեռ յես մանուկ եյի՝ մեր տան կանանց հետ գնում եյի բաղնիս: Մինչև հիմա ել չեմ սիրում արևելյան բաղնիսը, հիշում եմ կոշմարը կավերի հոտի, գոլորշիների, սիրտ մարեցնող տաքի և խըշխըշ ջրի:

Արևելյան բաղնիսը—այն վայրը ուր հորաքույրս կարող եր յերևան գալ իր բոլոր ընգունակություններով և պառավի բոլոր շարություններով:

Հորաքույրս բաղնիսում միայն լողանալով զբաղված չէր—նա դիտում եր այն աղջկան, վոր հարսնացու եր կամ թեկնածու՝ հարսնության, վորպեսզի բաղնիսից դուրս գալուց հետո՝ խոսեր—բամբասեր նրա մասին: Բաղնիսից անմիջապես հետո չէր կարող այցելություններ անել իր «տեսածները» կամ տեսնել ցանկացածները պատմելու բաղնիսում հանդիպած աղջիկների կամ հարսնացուների մասին, վորովհետև այնքան չեչքար եր ըսում մարմինն և այնքան վառուդ—թափուդ գեղեր եր գործ ածում, վոր սարսափելի հոգնած եր լինում և բերանը բաց՝ պառկում ու քնում եր:

Բայց մյուս օրը, յայնքան որն եր: Յուրտում եր ծոտները, վոտին քաշում եր մի խրրիկ, զիսին՝ մի կիտամաշ չալ և յեկնում եր հա-



ընանների տները, մեկից մյուսը, ամեն լսած խոսք և տեսած բան կարգապահորեն իր տեղը հասցնելու կամ՝ «խոսքը իր տեղը կողելու», ինչպես ինքը սովոր եր արտահայտվել:

Մտնում եր Յեղիս հանրմի մոտ: Յեղիս հանրմը մի կին եր, վոր իր շվաքից եր վախենում, վորի լուսամուտների վարաքույրները վնչ վոք տակավին կիսաբաց չեր տեսել, խոսում եր նոր ծնած հորթի նման, առանց արտասանելու մի ուրիշի անունը— մի դուստր բամբասանքի նմաներ: Յերեք վորդի ունեեր, մեծը, Ալեքը, կը լինեեր 41 տարեկան, բայց չեր ամուսնացել, վորպեսզի «խոսք զրուց» չլինեեր քաղաքում: Յեղիս հանրմը մի կին եր, վոր միայն յեկեղեցի եր գնում և յեկեղեցուց ուղիղ տուն եր վերադառնում և զբաղվում եր մինչև իրիկուն իր տան պարտեզի ծառերով, ժարգերով և խոտերի վրա արածող կենդանիներով: Մեր տեղում Յեղիս հանրմը մի տիպար կին եր, նրա մեկ հատիկ ազճիկը Զատկին միայն դուրս եր գնում — այն ել յեկեղեցի — վորի յերեսը վոչ վոք բաց չեր տեսել: Մայրը նրան կանգնեցնում եր յեկեղեցու վերնատան ամենից յետևը և հագլիվ թույլ եր տալիս քիթը և աչքերի միայն մին ազատագրելու իր յերեսի քողից:

Հորաքույրս գնում եր Յեղիս հանրմի մոտ և սկսում բամբասել Գուհար հանրմին ազճիկը,

վորին առջի որը տեսել եր բաղնիսում—մերկ:

— Կռնակին վրա յերկու մատ դանակի նըշան կա, սիլ գիտե ի՞նչ հիվանդություն ունի, լրսեր եմ, վոր Ալեքիդ համար ուզեր ես՝ չեն տրվեր, ասում եր նա:

— Սխալ ես լսեր, Վարդեր հորքոր, մեղմազին մայում եր Յեղիս հանրմը, Ալեքս հալա կարգվելու չե:

— Ի՞նչ գիտեմ, կը խոսին. յես ալ իմ պարաքս սեպեցի դալու և քեզի լուր տալու:

— Շատ շատ շնորհակալ եմ, Վարդեր հորքոր, յես կը սեպեմ, վոր դուն մեր բարեկամն ես, բարեկամ ըսածդ այդպես կըլլի:

Յեղիս հանրմը կարճ եր կապում—մի դուստր Գոհար հանրմը լսեր այդ խոսակցությունը և հորաքրոջս խոսքերի պատասխանատուն իրան բռներ:

Յերը հորաքույրս խոսքը վերջացուցած՝ դուրս եր գալիս մի ուրիշ դուռ բաղնիսում սպելի վոզեորված, Յեղիս հանրմը սենյակի մեջտեղում կանգնած՝ իր ցողունի նման, պառաված բազուկները վեր եր բարձրացնում, խաչակնքում յերեք անգամ և ասում.

— Տեր, դու պահյա՞ դմեզ ի փորձութենե Տեր, Տեր, անոխակալ և յերկայնամիտ:

Դրանից հետո հորաքույրս մտնում եր Մեմիք հանրմի տունը: Նա վարպետ եր խոսք բա-

նալու մեջ, ինչ նյութի մասին ել խոսվեր՝ նա կարող եր խոսքը ավտոմոբիլի պես շուռ տալ և բերել գցել իր ուղած ուղին: Մեմիք հանրմի տունը մտնելու պատճառն եր բամբասել Հագարխան խաթունի աղջկան, վոր գրույց կար թե պետք եր նշանվեր Մեմիք հանրմի քրոջը ամուսնու քրոջը թողանը հետ:

— Գիտե՞ս, Մեմիք հանրմ, սկսում եր պառավը, իմ գործս չե թեև, բայց վորովհետև յես քեզ շատ կը հավնիմ՝ կուզեմ վոր ձեր տունը լավ հարս գա: Յերեկ բաղնիքն եյի և, ինչպես յեղավ, մտա Հագարխան խաթունի ողան, և ինչ տեսնամ — աղջրկան ճովները (սրունքները) դեզ կը քսեր, ո՞վ գիտե, ըսի մտքիս մեջ, ինչ հիվանդութիուն ունի, մտմտացի թե Մեմիք հանրմը սախատ պիտի բերե իր տունը:

Մեմիք հանրմի տունը չպետք եր գար հարսը: Մեմիք հանրմը ամուսնու քրոջը թողանը հետ վորևե կապ չուներ, բայց Մեմիք հանրմի համար ել այդ խոսակցութիւնը քաղցր եր, վորովհետև Սարգիսին (իւր ամուսնու քրոջը թողը) ամուսնացնելու մտազրութիւն կար, բայց Մեմիք հանրմին «շան տեղ» չեյին դրել և իրեն վոչինչ չեյին հարցրել: Հորաքրոջս խոսակցութիւն նյութը չափից դուրս շահազրգոյց նրան և աճեցրեց նրա անտեղի հետաքրքրութիւնը: Սրունքներին դեզ գործածել բաղնիսում... ու-

րեմն անպայման մի ջղային անբուժելի հիվանդութիւն գոյութիւն ունի: Մեմիք հանրմը, առանց հորաքրոջս ճամբու դնելու, շալը քաշեց գլխին, վորպեսզի գնա և գեթ Սարգիսին հայտնի իր «անձնական քննութիւն» արդիւնքը: Հորաքույրս կազ-կազ վազեց նրա յետևից մինչև դուրսի դուռը և իբր վերջին խոսք՝ ասաց.

— Աղջիկ յեղած ատենս իմ ճովներս ըլ այդպես եյին, ատոր համար այս հալին ընկա:

Ուրիշ ժամանակ ասում եր, վոր իր սրունքներին ցավը վերջն ժառանգած ցավ եր, բայց այս պարագային իր խոսքի — բամբասանքի — կշիռը պահելու համար իր կազութիւն պատճառները տարավ և կապեց մինչև աղջիկութիւն շրջանին:

Այս յերկու տներից հետո՝ նա կարգով մըտնում եր զանազան ուրիշ տներ իր «տեսածները» իրենց տեղերը հասցնելու: Որինակ՝ մեկի համար ասում եր.

— Յերեսը տեղն ե, բայց մարմինը չորցած ե, իմ մարմինս քեզի որինակ:

Իր կմախքը որինակ եր բերում 17—18 տարեկան մի աղջկա մարմին, վոր յեթե դադարում ել լիներ, ավելի թարմութիւն ուներ քան հորաքույրս իր կենդանութիւնը:

Մի ուրիշ աղջկա համար ասում եր.

— Մարմնին վրա սղամարդու պես մազ ունի, ինչ աղջիկ ե վոր...

Այս բոլորը բաղնիսից դուրս, բայց նա յերբեմն փողբերդություններ եր խաղում՝ բաղնիսի ներսում:

Շատ լավ եմ հիշում — մի որ բաղնիսի դուրսի ընդհանուր սրահից մի ծանոթ կին մեր սենյակը յեկավ և մայրիկից խնդրեց մեր ջրից ոգտվել: Մայրիկս ուրախությամբ արտոնեց և սասաց.

— Խնդրելու պետք չկա, Ողաբեր հանրմ, հրամեցեք:

Մայրիկս սասաց և գնաց դուրս մի քիչ ցուրտ ոգ շնչելու: Հորաքույրս ներս յեկավ և տեսավ վոր Ողաբեր հանրմը լվացվում ե:

— Մեր սենյակեն դուրս գնա, հրամայեց նա:

— Վարդեր խաթուն, սասաց Ողաբեր հանրմը, խանրմը արդեն հրաման տվեր ե:

— Խանրմ մանրմ չեմ ճանչնար, գնա դուրս, կրկին հրամայեց մեր պառավը:

Ողաբերը զայրացավ: Սա ել այնպես մեղմ կանանցից չեք: Յերկուքը սկսեցին իրար խոսքեր կանչել, գնա — չեմ գնա — դուն վոր շունն ես — հալա կը խոսիս — գիտան իրար: Ողաբերի ազգականները հավաքվեցին մեր սենյակը, յերկու կողմի տաքության աստիճանները իրենց սահմանները անց կացան և բաց արվեց փողբերդության վարագույրը: Ողաբերը և իր մեկ յեր-

կու ազգականները վար առին իրենց յեվայությունը ծածկող շորերը, բաղնիսի կողիտ թասերը փաթաթեցին շորերի մեջ և հորաքրոջս ձգեցին սենյակի մեջտեղում և տուր թե կտաս: Պարզվեց մի անհունապես ազեղ տեսարան — ճարպոտ կանանց ծիծերը կատաղած շան զուխների նման սկսեցին վեր վար յելլել և իջնել, մեկի վտտերը սլլացին և ամբողջ հաստկովը և մսերովը զարնվեց սալին և ելի վտտի կանգնեց ավելի կատաղած: Հորաքույրս թասի հարվածներին պատասխանում եր իր փոքրիկ աթոռով, վորը վերջին անգամ, հուսահատած, նետեց Ողաբերին, ճեղքեց նրա ծիծերից մեկը, բայց ինքն ել փուվեց գետին և ուշաթափվեց: Քույրերս վախեցած արդեն փազել ելին և լուր տվել մայրիկիս, վոր հագիվ հասավ և դադարեցրեց կռիվը, քաշեց վարագույրը: Իմ ձեռքիցս բռնեց մայրիկս, բերեց դուրս, հազվեցրեց և պատվիրեց գնալ անմիջապես տուն և ասել մեր ծառային, վոր եշը բերի և հորաքրոջը տուն աանի: Մինչև յես իշուն հետ բաղնիս վերադարձա, բոլորն ել հագվել ելին, մայրիկս ախուր եր, իսկ հորաքույրս աչքերը փակած, բերանը բաց արած, ատամները ցցած, պառկել եր փոքրիկ գորգի վրա և հագիվ կարողանում եր անքալ:

Յերկար տարիներ համբերություն ունենալուց հետո՝ հորս համբերությունը վերջ եր դաճում— անկարելի եր հանգուրժել հորաքրոջս ներկայության մեր տան մեջ:

Հայրս մի որ տանը հաղորդեց իր վերջնական վորոշումներից մեկը— Վարդերը դուրս պետք է գտ մեր տնից: Հայրս չորս սենյակնոց մի տուն եր վարձել և ուղում եր, վոր հորաքույրս գնա և այնտեղ բնակի իր համար: Մայրս նախ ընդդիմացավ:

— Ատքան տարի քաշեր ենք, հիմա չպիտի քաշենք, ասաց մայրիկս:

Բայց հորս վորոշումը վորոշում եր:

— Յես վոր մինչև հիմա այդ կնիկը կը պահեյի՝ այն ազու խաթեր համար եր, մինչև կոկորդոս յեկեր հասեր է, համբերանք չմտաց, դուրս պիտի յելլա, դուրս, չեմ ուզեր, մագերս ճերմկցուց:

Այն ազան հորաքրոջս վորդի Սաչերն եր: Սաչերը գլորոցում ամենից ուշիմ և աջող աշակերան եր: Յերը հայկական ծխականը ավարտեց, հայրս նրան ուղարկեց թրքական Պետական բարձրագույն վարժարան — Իտտտինեն — և դրանից ել հետո ուղարկեց Պոլիս, բժշկական վարժարան: Հորս խոսքին վրա ուրիշ խոսք գնել

անկարելի եր, հեռաբար մայրս թույլ տվեց, վոր հայրս կանչի հորաքույրին և հաղորդի իր վորոշումը, միայն մայրս գալիք պատասխանատվությունից խուսափելու համար՝ Պիգատոսի պես ձեռքերը լվաց և դուրս յեկավ:

— Վերջեն վոր գղջաս, յես մեջը բաժին չունիմ, ասաց մայրիկս հայրիկիս, դուրս յելլալեն հետո՝ այնպիսի բաներ ընե, այնպիսի ոյիններ խաղա, վոր տեսնես:

Բայց հայրս կանչեց իր հարագատ քրոջը և շաա կարուկ կերպով ասաց.

— Յերեսուն տարի է ինձի հետ ես, առաջ ջահել եյիր, մենակ չեյիր կրնար ապրիլ բայց հիմա աարիքդ առեր ես, մարդ թելիդ չի կրնար գուշիլ, պետք է իմ տունես յելլաս և առանձին բնակիս, յես քեզի համար տուն եմ... հայրս չի կարողացավ խուսքը վերջացնել, հորաքույրս արձակեց մի այնպիսի ահուելի ճիչ, վոր կարճես յերեսուն տարուց ի վեր պահեստի դրած լիներ: Այս ահուելի ճչից մեր հարևանները վագեցին ներս, կարծելով, վոր մի արտակարգ բան է պատահել մեր տան մեջ: Մայրս սենյակից դուրս եր: Նա՛ վոր ամենափոքրիկ ազմուկից ցնցվում եր՝ վոչինչ չգրաց, վորովհետև ըստ պատում եր դրան:

Հայրս այլայլվեց, մինչև անգամ չկարողա-

ցավ խոսել, մի մարդ, վոր քաղաքում կատա-  
ղածի համբավ եր վայելում:

Մայրս մի քանի սուտերով հարևաններին  
ճամբու գցեց թե՛ հորքորը լսել ե, վոր Սաչերը  
Սև Ծովու մեջ խեղդվել ե: Թեև բոլոր հարե-  
վանները լսել եյին, վոր Սաչերի Պոլիս հասնե-  
լուն՝ հեռագիր եր ստացվել: Հորաքույրս վոչինչ  
չկարողացավ ասել, վոչ մի լուսաբանություն  
չեր կարող տալ, վորովհետև ուշաթափվել եր:  
Ավերի լավ եր սուտ պատճառներ տային, քան  
թույլ տար, վոր էր ուշաթափվելու Արվեստը  
տապալվեր՝ քանի վոր վերջերս մոտայից  
ընկել եր այդ:

Ուշաթափվել... ահա հորաքրոջս ուժեղ գեներե-  
րից մեկը: Տարիներ առաջ տան բոլոր անդամները  
վախենում եյին հորաքրոջ <sup>ո</sup> ուշաթափվելուց —  
բժիշկ, դեղ, սառը ջուր, բթին ուճիկներ — բայց վերջի  
վերջս իմացվեց նրա Ուշաթափվելու Արվեստը:

— Յերեսուն տարի առավ, ասում եր  
խեղճ մայրիկս, վոր հասկացա թե սուտ կը  
մարի:

Ճչից բավականին հետո գարթնեց հորա-  
քույրս, բայց մինչև իրիկուն չզազրեց լաց լի-  
նելուց:

Յերկրորդ օրը հայրս խոստովանվեց իր  
անգորությունը.

— Յեթե դուրս գա տունեն՝ ինձ արամին

առջև խաղք ու խայտառակ կընե, Մարգարիտ,  
ասաց հայրիկս:

— Պետք ե տանենք մինչև յետքը, պա-  
տասխանեց մայրիկս, այդ կնիկը մեր տան  
խարզան ե (ազուավը), քանի քշես խարզան,  
այնքան չար խաբարներ կը բերե.

— Այժի, հարց տվեց հայրիկս, մինչև յետքը  
վոր կըսես, այդ մինչև յետքը յե՞րբ ե, այս  
կնիկը բոլորին գուլիսը կուտե.

— Թո՛ղ մեր գուլիսը ուտե, բայց վոչ քու-  
կըդ, պատասխանեց հորս կինը:

— Իմ ու քուկիդ խնդիր չկա, յես կուգեմ,  
վոր կատվին գուլիսն անգամ չուտե, բայց բո-  
լորիսն ալ պիտի ուտե . . . վերջացրեց հայրիկս:  
Հորաքույրս մնաց մեր տանը:

7

Հայրս մի ազգական ուներ, վորի անունն  
եր Հաջի Մայր: Մենք բոլորս ել Հաջի Մայր  
եյինք ասում այն քաղցր պառավին, վորի ներ-  
կայությունը վորեև տան մեջ խաղաղություն  
եր: Մի պայճառ, ալեզարգ պառավ, վորի ձեռ-  
քերը շուշանի սպիտակություն ունեյին, վորի  
մոտենալիս՝ նոր լվացված և արգուկված ճերմա-  
կեղենի մաքուր բույր եր գալիս, նիհար,  
բայց վոչ վոսկրուտ: Նա մեզ միշտ պատմում եր

Յերուսաղեմ քաղաքի պատմությունները, ուր այցելել եր իբրև ուխտավոր, մի տասնյակ տարի առաջ: Նա ունեւր մի կարմիր մարջանից խաչ, մեջտեղում մի փոքրիկ ապակյա ծակ, վորի մեջ նայելիս յերևում եր Քրիստոսի խաչելության պատկերը: Այդ պատկերը—ասեղի ծակի չափ փոքրիկ ծակից յերևցած—իմ մանկական մտքիս վրա ավելի մեծ տպավորություն եր թողել քան հետագայի իմ տեսած սինեմաները, ռադիոֆոնները և ուրիշ գիտական հրաշալիքներ: Յես Յերուսաղեմի մասին միայն մի բան գիտեյի: Յերբ յերկրաշարժը որորում եր մեր տները՝ ամեն մարդ պոռում եր—Սյունն երուսաղմա»—յես, կարծում եյի, թե Յերուսաղեմի մեջ մի սյուն կա, վոր յերկրից մինչև յերկինքը յերկարած ե և այդ սյունն ե, վոր կարող ե հանդարտեցնել յերկրի կատաղությունը: Այդ խաչի պատկերը ուրիշ հորիզոններ բացավ իմ աչքիս, միշտ ել փրնտրում եյի Յերուսաղեմի սյունը և Քրիստոսի խաչելությունը: Հաջի Մայրը իմ մտքում միշտ կապվել եր խաչելության և այդ սյունի հետ և միշտ մտածում եյի, թե ինչպես այդ խորին բարի պառավը կարող եր կապ ունենալ խաչելության գործիքի և այդ վիթխարի սյունի հետ:

Մի որ Հաջի Մայրը ելի մեզ մոտ եր և

խոսք կար, վոր նա պիտի հեռանար մեր քաղաքից: Հայրս յերկար խորհրդակցության նըստեց նրա հետ:

Հայրս համոզում եր Հաջի Մորը, վոր հորաքրոջս հետը տանի Պոլիս:

— Յես կը վախնամ այդ կնիկեն, ասում եր Հաջի Մայրը, ճամբան գլխուս ոյին կը բերե:

— Ձե, առարկում եր հայրս, դուն գիտես, վոր քեզմե կը քաշվի:

— Նա միայն Աստուծոմե կը քաշվի, մարդոցմե քաշվիլ չունի, պնդում եր Հաջի Մայրը: Վերջապես հայրս աջողեց Հաջի Մորը համոզել, վոր հորաքրոջս հետը տանի:

Հիմա հարց եր ծագում թե ինչ կերպով կարելի պիտի լիներ հորաքրոջս համոզել գնալու: Հայրս մի քանի որեր ծանր մտածելուց հետո՝ իր մոտ կանչեց իր քրոջը և ասաց.

— Տղադ քեզ Պոլսեն ուզեր ե, պիտի զրկեմ վոր յերթաս տեսնաս:

Այս խոսքը դառավ մի նոր և անավոր ցավ: Հորաքրույրս մեկնաբանեց, վոր իմաչեըը հիվանդ ե և զրա համար են ուղարկում: Մինչև մեկնելու որը գովեց ու լաց յեղավ, լաց յեղավ ու գովեց իր աղին՝ կարծես թե նրա դազաղը գրված լիներ իր առջև: Ամբողջ մեր ընտանիքը Հորի համբերությամբ համբերեց այն մեծ հույ-

սով, վոր վորքան լաց և շիվան, այնքան մեկ-  
նելու մտքի խորացում:

Ութը մարդ հագրիվ կարողացավ հորաքրոջս  
անից դուրս բերել և կառք նստեցնել, վոտները  
իրար եր զարնում լաց լինելով և ճչելով:

— Խաչերս, Խաչերս, քոռնայի, քեզ այս  
որին չի տեսնեյի:

Հաջի Մայրը Պոլսում մի աղջիկ թու ու-  
ներ, վոր պատկերով նշանվել եր Յեգիպտոսում  
ապրող մի հարուստ վաճառականի հետ: Հաջի  
Մայրը գնում եր Պոլիս, վորպեսզի իր թուր տա-  
նի Յեգիպտոս և ամուսնացնի: Հորաքույրս պի-  
տի մնար Պոլսում, Խաչերի մոտ:

Ճանապարհին հորաքույրս մի քանի կռիվ —  
ներ կը սարքի Հաջի Մոր հետ:

— Վսյ, գուն այսպես ըսիր, վսյ, գուն  
այնպես ըսիր:

— Վարդեր, աղաչում ե Հաջի Մայրը, սիր-  
աբո հանգիստ պահե, ծով պիտի անցնենք, Աս-  
տուծո բարկությունը մի հրավիրեր մեր վրա:

— Շիտակ բանին Աստված չի բարկանար,  
պատասխանում ե հորաքույրս:

Մենք լսեցինք, վոր Պոլսում Խաչերը մի  
կերպ աջողացնում ե իր մորը ճանապարհ գնել  
Հաջի Մորը և նրա թուռանը հետ դեպի Յեգիպ-  
տոս: Թե ինչպես եր յեղել, վոր այդ կռիվներից

հետո Հաջի Մայրը համաձայնվել եր — յես չգի-  
տեմ:

Հորաքրոջս մեր անից դուրս գալուց հետո՝  
մեծ քրոջս բաղդը ժպտաց: Նրա բաղդը սկսեց  
վարդի կոկոնի նման բացվել: Քույրս 17 տարե-  
կան եր, սիրուն, սև աչքերով և հասակով: Ըստ  
մեր Խարբերդի սովորության նա պեաք եր բեր-  
նի ծամոց դառնար արդեն յերկու տարուց ի  
վեր: Պեաք եր վոր մի քանի անգամ հարսնու-  
թյան ուղեյին նրան, ծնողները մերժեյին, պետք  
եր վողջ քաղաքում խոսքի և զրույցի առարկա  
դառնար, բայց վորի՞ բերնին եր ընկել մոտենալ  
մեր տանը և աղջիկ ուզեր — հորաքույրս անմի-  
միջապես պիտի լիներ իր դերում, գործի վրա  
և անպայման խանդարեր: Յեթե մինչև անգամ  
չի խանդարեր, այնուամենայնիվ այդ եր զբոյ  
տպավորությունը:

Հորաքույրս գեռևս Սև Ծովու վրա եր, յերը  
մեծ քրոջս նշանեցինք, մի տարի հետո ամուսնա-  
ցնելու յերկուստեք խոստումներով: Քույրս —  
զարմանալի չե — դառավ հետաքրքրության ա-  
ռարկա նշանվելուց հետո: Ամեն ներս մանե-  
լուն և դուրս գնալուն, յեկեղեցի կամ բաղնիս  
հաճախելուն՝ նրա մասին մանրամասն պատմու-  
թյուններ եյին պտտվում քաղաքում: Հորսև մորս՝  
նրան տալիք դրամոժիտի մասին չիմացածը՝ քա-  
ղաքը իմանում եր: Առասպելներ եյին հյուսվում

նրա գրամոտիտի շուրջը: Իրամոտիտի չափերը այնքան ելին բարձրացվում, վոր մոտավորապես գալիս եր հավասարվելու հորս ունեցած հարստության:

Հորաքույրս այլևս չկար, մայրն դառել եր մեր տան իրական և տիրական տիրուհին, մանավանդ աղջիկները մայրը:

Խաղաղ եր մեր տան կյանքը, այնպես խաղանդ, ինչպես կապույտ ու անդորր՝ յերկինքը մեր ամառներին: Առաջին անգամն ելինք տեսնում, վոր մայրս լաց չի լինում, տան մեջ անհավսելիներ չկան, բամբասանքները դադարեցան, ազուավր, սև և անողոք ազուավր, չեր կանգ առնում մեր կտրի քիվերի վրա, մեր տան պատերը մի ժպտուն լուծթյուն ելին պահում:

Հորաքրոջս մեկնելուց վեց ամիս հետո լսեցինք, վոր Յեգիպտոսում մեռել է Հաջի Մայրը, վորովհետև իր թոռը մերժել եր ամուսնանալ իր նշանածի հետ հորաքրոջս թելադրությամբ և փախել եր Փարիզ և ամուսնացել մի ուրիշի հետ: Այս դեպքից հետո Հաջի Մայրը կաթվածք եր արել և մեռել: Իսկ Հաջի Մոր մահից հետո հորաքույրս յեկավ, բոբոս, կանգնեց... մեր տանը դրան առաջ:

Նա ելի վերագարձավ մեր առաստաղի տակ իր հետ բերելով գոբշ և սպառնական ամպեր: Մեր յերկինքը ելի մթնեց — կարկուտի նշան կար:

Անպայման մեր տանը պիտի պատահեր մի անեղ և մուխ բան:

Մի աշունի ցուրտ որ, մայրս վերագառնալով պարտեզից, տժգունած և այլայլած, իր ջինջ աչքերում մի քանի կաթիլ արցունքով, վողբագին սասց.

— Յերեք սև ազուավ մեկանց կը կանչեն մեր կտրի վրա, և չի կարողացավ գուշակություն անել:

Յերեկոյան հայրիկս սովորական ժամից ավելի շուտ տուն յեկավ և անմիջապես մտավ անկողին:

— Մարգարիտ, սասց նա մորս, թուլացած և տժգունած, հիվանդ եմ, սիրտս կը ցավի:

Հայրս այդ որվանից վոտքի չկանգնեց, անկողնում հիվանդ մնաց մինչև կաղանդի կես դիշերը:

Հորս հուզարկավորությունը տեղի ունեցավ այն նոր ճարվա ցուրտ առավոտը:

Տեղի եր ունեցել անեղ բան — հայրիկս չկար:

Հորաքույրս գտավ իր անխորտակելի պարանը վրան խաղալու, սլար գալու: Հայրիկիս վախը չկար, իսկ տան մյուս անդամներն ել

հորս մահվան վշտով եյին տարվել: Նրա առաջին գործը յեղավ ընկնել մեր նոր փեսայի յետևից, վորին ամուսնությունը արդեն մոտ էր: Հորաքույրս վորևե պատճառ չուներ մեր փեսային թշնամի լինելու, իսկ քույրս էլ խենդի նման սիրում էր իր նշանածին և փոխադարձաբար:

— Առանց ինձ նշանեն, ինձ մարդու տեղ չգնեն, յես այս տան մեջ վնչ աղախին եմ և վնչ ըլ շուն, մտածում էր հորաքույրս — ավելի ճիշտ՝ դավադրում:

Առաջին գործը յեղավ մորս միաքը պղտորել, բայց չոգնեց, հետո մեծ յեղբորս զրգուեց փեսայի դեմ և պատճառ յեղավ մի շարք անհամ և անհարկի կռիվների, մինչև անգամ ապտակ, ամաններ իրար գլխի, և այլն:

— Հակոբ, գառնուկս, գաղտնի փսփում էր հորաքույրս մեծ յեղբորս ականջին, փեսագ ասողին անդին, գլխեն դուրս խոսեք ե, վոր իբր թե դուն չես կրնար հորդ տեղը բռնել, շուայլ ես, պատիվ չես բերեր տանը, թե հորդ հին բարեկամները կամաց կամաց կը հեռանան և փուշտերու հետ գործ ունիս:

Յեղբորս միամտությունը և հորաքրոջս ինտրիգի աշոդությունը հասան մինչև այն աստիճանին, վոր մի որ յեղբայրս դուրս վանտեց տրնից մեր փեսային:

Քույրս լաց յեղավ, մայրս — զգայնություն

նից — հիվանդացավ, մենք էլ սկսանք չսիրել փեսային, վոր «պատճառ» էր յեղել մեր տան վրա թափած նոր կրակե կարկուտին: Փեսան հանդարտաբար ընավորությամբ մի յերիտասարդ էր և չկարողացավ ավելի ճիգ և կամք հանդես բերել:

— Հերիք ե, ասում էր վշտագին մայրիկս հորաքրոջս, հերիք ե սև սատանի դեր կատարես այս տան մեջ, ի՞նչ ունիս աղջկանս մոտ, վոր չես կրնար յետ առնել:

— Յես ի՞նչ բան ունիմ, պատասխանում էր հորաքույրս, խելառ աղադ և ընողը, ամեն բան բրեք, վերջեն յելեք և իմ վրաս նետեցեք հանցանքը, Աստուծո անհն չեք վախնար, շատ ըլ մի գուրգուրար փեսայիդ վրա, չգանվելիք չեր, մեր վտար թող պագնեն ու մեր աղջիկը առնեն:

Մայրիկս, ինչպես յերեսուն տարի, այս անգամ էլ լուեց առիթ շտալու համար նրան ավելի սատանայական մեքենայությունների, բայց մեր տան փեսայի հետ կռիվները այնքան հաճախակի դուռան, վոր փեսան ստիպվեց իր սված նշանը յետ պտհանջել: Նշանը ակամա յետ ուղարկվեց, բայց խեղճ յերիտասարդը վըշտից հիվանդացավ, ուժատուպուվեց և մի որ էլ մեռավ: Քույրս, աներեկակայելի ջանքերի շնորհիվ — Յեվրոպա, ամառանոց և ջերմուկներ — հագրիվ փրկվեց մահվան վտանգից:

Մինչև հիմա ել հիշում յեմ մեր ժամանակավոր փեսային, շատ սիրուն դեմքով և կազմվածքով, բարի և հիմար:

Խեղճ տղան քաշվում էր իր սերը պաշտպանելուց:

## 9

Յեգիպտոսի վրայով՝ Ամերիգայից՝ մեր քաղաքը հասավ մի մարդ, վոր աչքի զարնվեց միայն այն բանի համար, վոր առջևի ատամները յերկուսը վոսկուց էյին շինված և ապա ասում էյին, վոր շատ հարուստ է: Այս մարդը Խարբերդցի էր, բայց նրան միայն ծերունիներն էյին հիշում:

Ջինջիլյան եֆենդի — այս էր նրա ազգանունը:

Հորաքույրս Յեգիպտոսում պատահել էր այս վոսկե ատամներով պարոնին և խոստացել էր — Յերկիր վերագարձին — ցույց տալ իր յեղբոր աղջիկը:

Ահա թե ինչպես Ջինջիլյան եֆենդին մուտք գործեց մեր տունը և էլ դուրս չեկավ:

Թե հորաքույրս ինչպես և վորպիսի աշուղությամբ տարավ թիլալ կնիկի այս գործը — դժվար թե յես կարողանամ պատմել այստեղ

մանրամասնորեն և՛ ճշգրտորեն, վորովհետև այս պատմությունը հորաքույրս ամենաձաձուկ, մութ և լռին գործերից մեկն է:

— Ձեմ գիտեր թե աղջիկդ պահես պահես՝ վորին պիտի տաս, ասում էր մորս, բոլորն ըլկը խոսին, վոր թոքախտավոր է, բարակ ցավ ունի, և ինչեր, մեյ մը ախանջդ դուրս ըրե՛ և լսե՛, թթնն պիտի դնես:

— Բայց շատ տարիք ունի, ինծմե մեծ է, պատասխանում էր մայրիկս վոսկի ատամներով մարդու համար, գլխուն վրա ճերմակ մագերու համրանքը չկա, աղջիկս ծերի՞ պիտի տամ:

— Ո՛հ, գլուխդ հողիմ, ասում էր հորաքույրս, բոլորը Ջինջիլյան մը կըսեն հինգ Ջինջիլյան ըլ պուկունքներեն կը կախվին, ինչ պատիվներ կուտա խալսը աղջիկները անոր շալակը հանելու, բայց բազը տես, վոր իր վոտքովը ընկեր է մեր դուռը:

Վերջապես հորաքույրս բոլորին համայայնացրեց:

Մինչև ամուսնություն՝ մի կերպ մենք նոր փեսային տարինք, բայց ամուսնությունից հետո՝ մեծ յեղբայրս մտավ իր դերում, վորովհետև փեսան դուրս յեկավ իր դերից:

Ջինջիլյան եֆենդին սկսեց յեղբորս անձնական գործերին խառնվել: Յեղբայրս անցել էր հորս

տեղը և չեր տանում, վոր վորեւե մեկը միջամտեր իր խելքին:

Մենք մի մեծ պարտեզ ունեյինք քաղաքից յ քիչ դուրս, վոր չորս բուրբ փշենիներով ցանկապատ ունեւ: Մեծ յեղբայրս ցանկացավ ցանկապատի տեղ աղյուսով պատ կանգնեցնել: Շատերը յեղբորս խորհուրդ ավին չանել այդ, վորովհետև ծախսը շատ է և չարժէ:

— Գառնուկս, մոռցիր, վոր յերթա, խրատում եր մեր արևոր ազգականներից մեկը:

— Տղան, մի ընեւ, ասում եր մայրս:

— Պիտի ընեմ, մեկ անգամ խոսքը բերնես թուեր ե—պիտի կատարվի, համառում եր յեղբայրս:

Մի յերեկո Զինջիլյան եֆենդին մեր տանն եր—ընթրիքի: Ճաշի ժամանակ ելի, ինչպես միշտ, խոսքը բացվեց պատի մասին: Վերջին յերկու ամիսների ընթացքին արդեն մեր տան մեջ պատի խոսակցությունից դուրս ուրիշ խոսակցություն գրեթե չկար: Մի շարք համոզիչ խոսքեր ասվելուց հետո՝ յերբ յեղբայրս շարունակեց պնդել պատը կանգնեցնելու մասին՝ փեսան սկսեց բզակել:

— Առնվազն սարսախություն ե, հիմար...

Զինջիլյան եֆենդին գեռես չեր լրացրել իր խոսքը, յեղբայրս իր առաջ գրված կանաչ լոբու ամանը առավ և խփեց փեսայի վոսկե

ատամներին: Բուրս ել սեղանից թռանք, քրոջս սիրտը գնաց, մայրս դայրացավ, վոր փեսան խոսքի խառնվեց և վիրավորեց յեղբորս, հորաքույրս փախավ դուրս, իսկ փեսան և յեղբայրս ընկան իրար կօկորդի: Վոչ վոք չկար, վոր բաժաներ, յերկուքն ել սպասում եյին, վոր մեկը միջամտի: Վերջիվերջս մայրս հրամայեց:

— Հակոբ, բավական ե:

Հակոբը բաց թողեց փեսայի վիզը:

Յերեք որ հետո պատը սկսեց կառուցվել, բայց մեր տան և Զինջիլյան եֆենդու միջև պատի խնդիրը միշտ ֆնաց դաժան խնդիր:

Նորաքույրս շատ աշխատեց փեսան նորից մեր տուն բերել, բայց այդ նրան յերբեք չաջողվեց:

## 10

Նորս մահվանից մի քանի տարիներ անցել եյին, մենք արդեն բավականին մեծացել եյինք՝ յերբ մեր տան մտաիկ ազգականներ խորհուրդ ավին բաժանել հորենական ժառանգը, վոր տարիներ հետո «մութ կողմեր» չմնան:

— Ինչնու պետք խառնակ բան, սոսց մեր մեծ հայրը—մորս հայրը—աս իմս, աս՝ քուկդ, նորեն յեղբայր ու քույր, արյունը ջուր չի դառնար:

— Մաքուր հաշիվը ազեկ բան է, ասաց ուրիշ մի ազնվաշուք ազգական, ին՞չ պետք կա տարիներ հետո կովի և ձեծիվի, քանի վոր հիմա ամեն բան մեջտեղն է, մեկ՝ քեզ, մեկ՝ անոր, մեկ՝ մյուսին, մեկ ըլ՝ մյուսին, խնդիրը կը վերջանա:

Մայրս, յեղբայրներս և քույրերս համաձայնվեցին և ժառանգի բաժանման գործը սկսվեց և ընթանում էր շատ խաղաղ, յերբ, հանկա՛րժ, հորաքոյրս կախվեց մեջտեղում:

— Յերեսուն տարի է յես այս տան մեջ կաշխատեմ, առանց ինձի չեք կրնար ասեղ մը իսկ բաժնել, հայտարարեց նա:

Մյուս առավոտ մենք լսեցինք, վոր նախքան այդ հայտարարությունը— զարմանալի էր, վոր մինչև այդ լռել էր— գնացել և փաստաբանների հետ խորհրդակցել էր, գտել էր մի քանի պնակաղեղներ, վորոնք պիտի ջանային մի բան կորզել մեզանից:

Մեծ յեղբայրս նախ կանչեց իր մոտը հորաքրոջս և հորգորեց, վորպէզի այդ սիրուց հրաժարվի:

— Հրաժարվիր այդ խելքից, ասաց յեղբայրս, յեթե վոչ քեզ ըլ կը ձգեմ փեսա Զինչիլյանի որին:

— Իմ արյանս իրավունքն է, պատասխանեց հորաքույրս:

— Քու արյանդ մեջը... հարեց մեծ յեղբայրս և կաատղեց:

Վեր, վար, — հարևանները ելի հավաքվեցին:

— Կնւզեմ, իմ բաժինս կուզեմ, իմ հարազատ յեղբորս մալն է, ձշում եր պառավը:

— Գուն վոր ասեղ մը առիք այս տեղեն՝ ընը՝, պատասխանում էր յեղբայրս և հինգ մասներով բռնում բեխը և ջույց տալիս:

Առաջին անգամ լինելով հորաքույրս չուշաթափվեց: Վերջին գործն էր, վոր մեզ հետ ունենում էր և ուշաթափվելով գործը զլուխ չեր գա:

Մի քանի որ հետո, ահավոր լացուկոծի մեջ, հորաքույրս դուրս էր գնում մեր տնից որքնական միջոցներով և ծառաները դուրս ելին բերում իր պատմական ընկույզե մեծ սնդուկը:

1916 թ. Թիֆլիս.



ՀՀ Ազգային գրադարան



NL033301

31343

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.